
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ *

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ բարբառ, միջբարբառ, խոսվածք, բարբառային համապատկեր, բարբառային միավորներ, բարբառային հատկանիշներ, բազմահատկանիշ վիճակագրական դասակարգում, Նախիջևանի տարածք, Ագուլիսի, Արարատյան, Արցախ-Սյունիքի, Խոյի, Մարաղայի, Ջուղայի բարբառներ, Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի միջբարբառ:

Նախաբան

Նախիջևանի տարածքը, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի՝ Շարուր, Սյունիք աշխարհի՝ Ճահուկ և Երնջակ գավառները, լինելով ազգագրական տարբեր շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային բռնի տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

1918–1920 թթ. իրադարձությունների նախօրյակին¹, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Անցյալ դարասկզբի Նախիջևանի հայ բնակչության վերաբերյալ առկա վիճակագրական-տեղագրական ուսումնասիրությունների, մասնավորապես՝ պատմաբան ու վիճակագիր Ա.Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Հայթորքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.)» հայտնի աշխատանքի² ընձեռած տվյալների և տարածքում առկա խոսվածքների վերաբերյալ տարիների հավաքական աշխատանքների հիման վրա կազմել ենք Նախիջևանի գավառների հայ բնակչություն ունեցող բնակավայրերի բարբառների համապատկերը:

* Ներկայացվել է 14. VIII. 2020 թ., գրախոսվել է 25. VIII. 2020 թ., ընդունվել է տպագրության 03. IX. 2020 թ.:

¹ Նկատի ունենք 1918 և 1920 թթ. Արևելյան Հայաստանի դեմ Թուրքիայի զավթողական պատերազմները, 1919 թ. թուրքական բանակի զինվորների ու նրանց միացած ադրբեջանցի խառնամրդի կողմից Ագուլիսում և շրջակա գյուղերում իրականացված հայ բնակչության կոտորածները, փրկվածների արտագաղթն ու հետագայում նրանց վերադարձին խոչընդոտելը Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից:

² Ա.Դոյ (Յ. Տեր-Մարտիրոսյան). Հայթորքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.). փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Երևան, 1907, էջ 64–67:

Նախիջևանի հայ բնակավայրերի բարբառները

1605 թ. Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով գրեթե ամայանալուց հետո, մի քանի տասնամյակ անց, աստիճանաբար հայերի կողմից մասամբ վերաբնակեցվելուց, ապա՝ 1828 թ. Արևելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց հետո, հայերի թիվը գերակշիռ դառնալուց հետո՝ 1918 թ. վիճակով, Նախիջևանի հայ բնակչության մեծ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի և Մարաղայի բարբառներով։ Ըստ որում, Խոյի բարբառով խոսում էր 33 բնակավայր՝ Շարուր գավառի՝ Նորաշեն քաղաքը, Ալաքլու, Դաշարիս, Թագագյուղ, Խանլուխլար, Վարմազյար, Քեշտազ գյուղերը, Ճահուկ գավառի՝ Շահապոնք քաղաքը, Ճահուկ ավանը, Առինջ, Բաբոնք, Գյումուր, Խալխալ, Կժաձոր, Նորս, Նորս-Մազրա գյուղերը, Երնջակ գավառի՝ Արազին և Կզնուք գյուղերը, Նախճավան գավառի՝ Ալագյոզ-Մազրա, Դիդուվար, Եմխանա, Խալիլու, Կարախանբեկլու, Կուլիբեկ Դիզա, Երնջակ (Յարմջա), Հաջիվար, Մամարգա Դիզա, Մոխրաբլուր (Քյուլթափա), Նազարապատ, Շմրթան, Վերին Ըզնոբա, Տալբատ (Թմբուլ) և Քյարիմբեկ Դիզա գյուղերը, իսկ Մարաղայի բարբառով 3 բնակավայր՝ Գողթն գավառի՝ արաքսամերձ Վերին Ազա, Ներքին Ազա ու Դեր գյուղերը։

Չնայած Նախիջևանի բնակչությանը վիճակված բազմաթիվ զանգվածային տեղաշարժերին՝ տարածքում, այնուամենայնիվ, պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ. Ագուլիսի բարբառով խոսում էր 7 բնակավայր՝ Գողթն գավառի Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Յոնա, Տանակերտ, Քաղաքիկ, Հանդամեջ և Դիսար գյուղերը, Ջուղայի բարբառով 1 բնակավայր՝ Երնջակ գավառի Ջուղա գյուղը, Արարատյան բարբառով 4 բնակավայր՝ Նախճավան գավառի Նախիջևան քաղաքն ու Այլապատ, Աստապատ և Կարմիր վանք գյուղերը, Ճահուկ-Վայքի միջբարբառով 2 բնակավայր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծուի (Բադամլու) գյուղերը, Արցախ-Սյունիքի բարբառով 7 բնակավայր՝ Երնջակ գավառի Աբրակունիս, Գյաղ, Նորաշեն, Շահկերտ, Շոռթ և Փորաղաշտ (Փարաղաշտ) գյուղերը, Հյուսիսային Գողթնի միջբարբառով 6 բնակավայր՝ Գողթն գավառի՝ Ռամիս, Փառակա, Մեսրոպավան, Բիստ, Ողոհի (Ալահի) և Խուրստ գյուղերը։ Բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև միջխոսվածքներ՝ Ջուլֆայի (Ջուղայի ու Խոյի), Որդուարի (Ագուլիսի և Խոյի)³։

Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Նախիջևանում առկա էին հայերենի բարբառների «ուս» և «լիս» ճյուղերի բարբառներ, որում՝ «լիս» ճյուղին պատկանում էին Խոյի ու Մարաղայի բարբառները, իսկ տեղաբնիկ բարբառները պատկանում էին «ուս» ճյուղին։ Տարածքում առկա էին ինչպես երկաստիճան ձայնեղագուրկ, այնպես էլ՝ եռաստիճան և քառաստիճան բաղաձայնական համակարգերով բարբառներ. ըստ որում՝ քառաստիճան համակարգ ուներ միայն Ջուղայի բարբառը, որտեղ առկա էին ձայնեղներ, խուլեր, շնչեղ խուլեր ու շնչեղ ձայնեղներ, եռաստիճան՝ Արարատյան և Ագուլիսի բարբառները (ձայնեղներ, խուլեր ու շնչեղ խուլեր), թեև Ագուլիսի բարբառ համարվող Յոնայի ենթաբարբառը

³ Ա. Վ ա ր դ ա ն ե ա ն. Նախիջևանի բարբառային քարտեզը. – «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), 2000, հ. 1–12, էջ 457–470։

վերոհիշյալ մյուս բարբառների (Արցախ-Սյունիքի, Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի, Խոյի և Մարաղայի) նման ուներ բաղաձայնների երկաստիճան ձայնեղագույրկ համակարգ (խուլեր ու շնչեղ խուլեր):

Ըստ Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ տարածքի բարբառները պատկանում էին հայերենի բարբառների արևելյան խմբակցության՝ արևելյան կամ Ագուլիս-Մեղրու (Ագուլիսի, Գողթնի), հարավարևելյան կամ Խոյ-Մարաղայի (Խոյի, Մարաղայի), հյուսիսարևելյան կամ Արարատյան (Արարատյան) և ծայր հյուսիսարևելյան կամ Արցախ-Շամախու (Սյունիք-Արցախի) բարբառախմբերին:

Բարբառային այս բազմազանության մեջ իր հատկանիշներով առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող՝ Ագուլիսի բարբառը կամ զոկերենը, որի առաջին տպավորությամբ խիստ անհասկանալի լինելը հետևանք է ձայնավորների կրած գրեթե անձանաչելի փոփոխությունների, պարզ ձայնավորների դիմաց երկբարբառների առկայության, բայի խոնարհման առանձնահատկությունների և այլն: Ագուլիսի բարբառը վերջնականապես մարեց 1989 թ., երբ իրենց բնօրրանից՝ պատմական Գողթն գավառի նշանավոր Յդնա գյուղից, արտաքսվեցին բարբառի վերջին կրողները:

Այդուհանդերձ, Ագուլիսի բարբառը հայերենի ամենավաղ և մանրամասն ուսումնասիրված բարբառներից է, որի մասին ինչպես հայ, այնպես էլ օտարազգի լեզվաբանների կողմից հորվածներ և ուսումնասիրություններ են հրապարակվել դեռևս XIX դ. կեսերից [Հայնրիխ Պետերման (1866՝ գերմաներեն), Քերտլբե Պատկանյան (1868՝ գերմաներեն, 1869՝ ռուսերեն), սակայն Մարգիս Մարգարյանցի⁴ և Հրաչյա Աճառյանի⁵ հիմնարար աշխատանքները սպառնալիք ուսումնասիրություններ են այս բարբառի հետազոտման ուղղությամբ: Այդուհանդերձ, ուշագրավ է նաև Մարի Ջաքարյանի՝ համեմատաբար վերջերս հրապարակած «Ագուլիսի բարբառը» մենագրություն-բառարանը⁶, որը լրացնում է նախորդ աշխատանքները, մասնավորապես՝ բառապաշարի առավել մանրակրկիտ ներկայացման առումով:

Դասական բարբառագիտությունը ժամանակին ուսումնասիրել է նաև Արարատյան, Ջուղայի, Արցախի, Խոյի, Մարաղայի բարբառները: Ընդ որում, Ջուղայի և Մարաղայի բարբառները կրկին ուսումնասիրել է հայ լեզվաբանության, մասնավորապես՝ բարբառագիտության մեծ երախտավոր Հ. Աճառյանն իր՝ «Քննություն Նոր Ջուղայի բարբառի»⁷ և «Քննություն Մարաղայի բարբառի»⁸ աշխատանքներում: Արցախ-Սյունիքի բարբառը «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատանքով ուսումնասիրել է Գարեն Դավթյանը⁹, որին Սյունիքի խոսվածքների առումով լրացնում է Ալեքսանդր Մարգարյանի

⁴ Մ. Մարգարյան. Ագուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), Մոսկվա, 1883:

⁵ Հ. Աճառյան. Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935:

⁶ Մ. Ջաքարյան. Ագուլիսի բարբառը, Երևան, 2008:

⁷ Հ. Աճառյան. Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Երևան, 1940:

⁸ Հ. Աճառյան. Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926:

⁹ Գ. Դավթյան. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:

«Գորիսի բարբառը» մենագրությունը¹⁰: Հայ բարբառագիտության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններում (Արարատ Ղարիբյան, Ահարոն Գրիգորյան, Սիրանուշ-Բադրասարյան-Թափալցյան և այլք) մեծ տեղ են գրավում Արարատյան բարբառին նվիրված բաժինները: Դասական բարբառագիտության մեջ Աստապատի բարբառը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ:

Նախքան շահաբբասյան բռնագաղթն Արարատյան բարբառը տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել՝ Արարատյան դաշտը և Արաքսի հովիտը ներառյալ, ինչի ապացույցներից է Նախիջևանի տարածքում պահպանված հիշյալ չորս բնակավայրերի, ինչպես նաև Արաքսի իրանյան ափում գտնվող Դարաշամբ գյուղի խոսվածքները: Ի դեպ, Նախիջևանի տարածքին մերձակա Արարատի մարզում նույնպես պահպանվել են տեղաբնիկ՝ Արարատյան բարբառի խոսվածքներ (Արարատ, Այգավան գյուղեր):

Համեմատաբար ուշ է ուսումնասիրվել Ճահուկ-Վայքի միջբարբառը (Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղեր, հյուսիսային Նախիջևանի, այժմ արդեն հայաթափ երկու բնակավայրեր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծուի գյուղերը): Մինչև 1980-ական թվականներն այս խոսվածքախմբի մասին սոսկ թռուցիկ հիշատակություններ կային բարբառագիտական գրականության մեջ, որտեղ համարվում էր Արարատյան բարբառի խոսվածք: Մեր մի շարք աշխատանքներով ու մենագրությամբ¹¹ պարզել ենք, որ Ճահուկ-Վայքի միջբարբառն Արարատյան բարբառի խոսվածք չէ, այլ իր հատկանիշներով միջակա դիրք է գրավում Արարատյան, Ջուղայի և Արցախ-Սյունիքի բարբառների միջև: Աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման այս փաստն էլ հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը:

Պարզվում է, որ շահաբբասյան բռնագաղթից առաջ այս բարբառն էլ տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, որի ապացույցներից են Երևանի մերձակայքում գտնվող Զովմակչի գյուղում 1679 թ. երկրաշարժից հետո Ճահուկ գավառի Նորս (Նորք) գյուղից վերաբնակված և բնակավայրը Նորք վերանվանած հայերի խոսվածքի՝ հնչյունաբանական, բառապաշարային ու ձևաբանական հատկանիշների բազմաթիվ ընդհանրությունները Հյուսիսային Նախիջևանի և Ճահուկ գավառի տեղաբնիկ խոսվածքների հետ¹², ինչպես նաև՝ նույն տարածքի Ղարադուշ գյուղից ու Ճահուկ ավանից XVII-XVIII դդ. Թուքիայի Բոլու քաղաք տեղափոխված կաթոլիկ հայերի խոսվածքների հետ¹³: Հենց այս նկատառումով՝ նախկինում Վայոց ձորի միջբարբառ անվանված եզրույթը հետագայում վերանվանել ենք Ճահուկ-Վայքի միջբարբառ:

¹⁰ Ա. Մ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Գորիսի բարբառը, Երևան, 1975:

¹¹ Ա. Վ ա ր դ ա ն յ ա ն. Վայոց ձորի միջբարբառը, Երևան, 2004:

¹² Ա. Վ ա ր դ ա ն յ ա ն. Նորքի խոսվածքի և Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքների բառապաշարային ընդհանրությունները. – «Հայերենագիտության արդի խնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 92–98:

¹³ V. S a m u e l i a n. Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours. – Հայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր, Ստեփանակերտ, 2001, էջ 2:

Հյուսիսային Գողթնի միջբարբառը

Նախիջևանի տարածքի վերջին չուսումնասիրված բարբառային միավորը պատմական Գողթն գավառի՝ Ռամիս, Փառակա, Մեսրոպական, Բիստ, Ողոհի գյուղերի լեզվական բավական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքախումբն էր:

Վերջին տարիների ուսումնասիրություններում այս 5 խոսվածքների հանդեպ նույնպես կիրառել ենք Գ. Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքը: Աղյուսակի առաջին 50 կետերի՝ հնչյունաբանական հատկանիշների արդյունքներով հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով¹⁴:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական հատկանիշների
ներքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպական	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	-----	5	6,5	6	5
Մեսրոպական	5	-----	4,5	6	3
Ողոհի	6,5	4,5	-----	4,5	4,5
Ռամիս	6	6	4,5	-----	3
Փառակա	5	3	4,5	3	-----

Ավելին, խոսվածքները միմյանց նկատմամբ առավել նվազ տարբերություններ են դրսևորում Գ. Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակի երկրորդ 50 կետերի՝ ձևաբանական հատկանիշների համեմատության արդյունքում՝ տարբերվելով նվազագույնը՝ 1 ու առավելագույնը՝ 4,5 միավորով:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական հատկանիշների
ներքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպական	Ողոհի	Ռամիս	Փառակա
-----------	------	------------	-------	-------	--------

¹⁴ Ա. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունական առանձնահատկությունները. «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2019, էջ 199–208:

Բիստ	-----	4	3	2	2
Մեսրոպ-ավան	4	-----	3,5	3	4,5
Ողոհի	3	3,5	-----	1	4
Ռամիս	2	3	1	-----	3,5
Փառակա	2	4,5	4	3,5	-----

Ընդհանրացնելով այս երկու աղյուսակների նյութը՝ ստացել ենք հետևյալ պատկերը.

Գողթնի խոսվածքների բարբառային հատկանիշների
համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպ-ավան	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	-----	9	9,5	8	7
Մեսրոպ-ավան	9	-----	8	9	7,5
Ողոհի	9,5	8	-----	5,5	8,5
Ռամիս	8	9	5,5	-----	6,5
Փառակա	7	7,5	8,5	6,5	-----

Հատկանիշների տարբերությունների նման ցածր մակարդակը (ընդամենը 5,5–9,5 միավորի) վկայում է, որ Հյուսիսային Գողթնի հինգ խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ, ինչը համապատասխանում է Գ. Ջահուկյանի սահմանած 0,5–22 միավորի տարբերություններով միջակայքի¹⁵:

Գ. Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքներից ելնելով՝ Հյուսիսային Գողթնի խոսվածքի՝ հարակից բարբառների նկատմամբ դիրքը ճշտելու նպատակով, այս խոսվածքի ընդհանրացված-միջին բարբառային հատկանիշները (գուգաբանությունները) համեմատել ենք հարակից բարբառների հատկանիշների հետ: Որպես համեմատության եզրեր ընտրել ենք Հյուսիսային Գողթնին աշխարհագրորեն առավել մոտ տարածքներ ընդգրկող ավանդական բարբառները՝ Ագուլիսի, Արցախ-Սյունիքի և Մեղրու: 100 հայտնի բարբառային հատկանիշների¹⁶ համեմատության արդյունքները վկայում են, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքն ամենամերձավոր առնչություն ունի ինչպես Արցախ-Սյունիքի բարբառի (տարբերությունները կազմում են 21,5 միավոր, որը գրեթե խոսվածքից բարբառի

¹⁵ Գ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 127:

¹⁶ Նույն տեղում, էջ 41:

անցման սահմանն է), այնպես էլ՝ Մեղրու բարբառի (տարբերությունները կազմում են 23 միավոր) և Ագուլիսի բարբառի (տարբերությունները՝ 25 միավոր) հետ:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչունաբանական հատկանիշների արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ագուլիսի	Արցախ-Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ագուլիսի	-----	16	13,5	11,5
Արցախ-Սյունիքի	16	-----	12	12
Հյուսիսային Գողթնի	13,5	12	-----	12
Մեղրու	11,5	12	12	-----

Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական հատկանիշների արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ագուլիսի	Արցախ-Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ագուլիսի	-----	10,5	11,5	11
Արցախ-Սյունիքի	10,5	-----	9,5	11,5
Հյուսիսային Գողթնի	11,5	9,5	-----	11
Մեղրու	11	11,5	11	-----

Եզրակացություն

Հատկանիշների նմանօրինակ մերձավորությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքն իրենից ներկայացնում է միջբարբառ՝ հայ բարբառների արևելյան խմբակցության՝ Արցախ-Շամախու կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի Արցախ-Սյունիքի բարբառի, ու Ագուլիս-Մեղրու կամ արևելյան բարբառախմբի Մեղրու և Ագուլիսի բարբառների միջև:

Արտակ Վարդանյան – Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝

Նախիջևանի և Վայոց ձորի տարածքների բարբառների ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 20 հոդվածի: artva@list.ru

REFERENCES

- A-Do (Y. Ter-Martirosean). Hay-turkakan endharume Kovkasum (1905–1906 tt.). pastakan, vijakagrakan, teghagrakan lusabanutyunnerov, Yerevan, 1907 (In Armenian).
 Ajaryan H. Knnutivn Agulisi barbari, Yerevan, 1935 (In Armenian).
 Ajaryan H. Knnutivn Maraghayi barbari, Yerevan, 1926 (In Armenian).
 Ajaryan H. Knnutivn Nor Jughayi barbari, Yerevan, 1940 (In Armenian).
 Davtyan K. Lernayin Gharabaghi barbarayin karteze, Yerevan, 1966 (In Armenian).
 Jahukyan G. Hay barbaragitutyan neradsutyun, Yerevan, 1972 (In Armenian).
 Margaryan A. Gorisi barbarez, Yerevan, 1975 (In Armenian).
 Samuelian V. Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours. – Hay barbaragitutyan mijazgayin hamagumari nyuter, Stepanakert, 2001.
 Sargseants S. Aguletsots barbarez (zokeri lezun), Moskva, 1883 (In Armenian).
 Vardanyan A. Nakhijevani barbarayin karteze. – “Handes amsorya” (Vienna), 2000, h. 1–12 (In Armenian).
 Vardanyan A. Vayots dzori mijbarbare, Yerevan, 2004 (In Armenian).
 Vardanyan A. Norki khosvadski ev Nakhijevani taratski vorosh khosvatskneri barapasharayin endhanrutyunner. – “Hayerenagitutyan ardi khndirner” gitakan hodvatsneri zhoghovadsu, Yerevan, 2018 (In Armenian).
 Vardanyan A. Hyusisayin Goghtni khosvadskneri hnchyunakan arandznahatkutyunnere.– “Hayots lezvi patmakan usumnasirutyan ardi khndirner” gitazhoghovi nyuter, Yerevan, 2019 (In Armenian).
 Zakaryan M. Agulisi barbarez, Yerevan, 2008 (In Armenian).

МЕЖДИАЛЕКТ СЕВЕРНОГО ГОХТНА В ДИАЛЕКТНОЙ ПАЛИТРЕ НАХИДЖЕВАНА

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Резюме

Ключевые слова: диалект, междиалект, говор, диалектная палитра, диалектные единицы, диалектные признаки, многопризнаковая статистическая классификация, территория Нахиджевана, агулисский, араратский, арцах-сюникский, хойский, марагинский, джугинский диалекты, джаук-вайкский междиалект, междиалект Северного Гохтна.

В канун событий 1918–1920 гг., когда большинство населения составляли армяне, территория Нахиджевана охватывала около семи десятков армянонаселенных городов и сел. Преобладающая часть населения говорила на диалектах переселенцев, обосновавшихся на территории с 1828 года – хойском диалекте (33 поселения) и на марагинском диалекте (3 поселения). Сохранились также местные диалекты – агулисский (7 поселений), джугинский (1 поселение), араратский (4 поселения), арцах-сюникский (7 поселений), джаук-вайкский (2 поселения), говоры Северного Гохтна (6 поселений). Вследствие внутренних перемещений населения образовались также межговоры – джультинский (джугинский-хойский), ордубадский (агулисский-хойский).

Согласно традиционной однопризнаковой классификации армянских диалектов, диалекты Нахиджевана принадлежат к ветвям «ум» и «лис» армянских диалектов – с двухстепенными, трехстепенными и четырехстепенными консонантными системами, а согласно разработанной Г. Джаукяном многопризнаковой статистической классификации – восточной (агулис-мегринской), юго-восточной (хой-марагинской), северо-восточной (араратской) и крайне северо-восточной (арцах-шамахинской) диалектным группам восточной группировки армянских диалектов.

В этом многообразии выделяется агулисский (зокский) диалект, кажущаяся с первого взгляда крайняя непонятность которого является следствием почти неузнаваемых изменений гласных, наличия дифтонгов против простых гласных, особенностей спряжения глагола и др. Агулисский диалект окончательно угас в 1989 г., когда из его колыбели – села Цхна исторической провинции Гохтн, были изгнаны последние носители диалекта.

Последняя неисследованная диалектная единица территории Нахиджевана – группа говоров северных сел исторической провинции Гохтн – Бист, Месропаван, Вохохи, Рамис, Парака, представляющая довольно близкие языковые отношения.

Применение к этим пяти говорам Северного Гохтна разработанного Г. Джаукяном принципа многопризнаковой статистической классификации выявляет достаточно тесную близость фонетических и морфологических признаков упомянутых говоров. Низкий уровень разниц между признаками (всего 5,5–9,5 единиц) свидетельствует, что их можно рассматривать как говоры того же диалекта или междиалекта, что полностью соответствует установленному Г. Джаукяном интервалу 0,5–22 разниц единиц.

Говоры Северного Гохтна имеют самое близкое отношение как с арцах-сюникским диалектом (разницы составляют 21,5 единиц, что почти является границей перехода говора к диалекту), так и с мегринским (разницы – 23 единицы) и агулиским (разницы – 25 единиц), следовательно, являются междиалектом Северного Гохтна.

Артак Варданян – к. филол. н., старший научный сотрудник отдела диалектологии Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: исследование диалектов

территорий Нахиджевана и Вайоц Дзора. Автор 1 монографии и около 20 статей. artva@list.ru

THE INTERDIALECT OF NORTH GOGHTN IN DIALECTAL PALETTE OF NAKHIJEVAN

ARTAK VARDANYAN

S u m m a r y

Key words: dialect, interdialect, subdialect, dialectal palette, dialectal units, dialectal signs, multi-sign statistical classification, territory of Nakhijevan, Agulis dialect, Ararat dialect, Artsakh-Syunik dialect, Khoy dialect, Maragha dialect, Jahuk-Vayk interdialect, North Goghtn interdialect.

On the eve of the events of 1918–1920, when the majority of the population were Armenians, the territory of Nakhijevan covered about seven dozen Armenian-settlements cities and villages. The overwhelming majority of the population spoke the dialects of the settlers who had settled in the territory since 1828 – the Khoy dialect (33 settlements), as well as the Maragha dialect (3 settlements). Local dialects have also survived – the Agulis dialect (7 settlements), the Jugha dialect (1 settlement), the Ararat dialect (4 settlements), the Artsakh-Syunik dialect (7 settlements), the Jahuk-Vayk interdialect (2 settlements), the subdialects of North Goghtn (6 settlements). As a result of internal displacements of the population, inter-subdialects were also formed – Julfa (Jugha-Khoy), Ordubad (Agulis-Khoy).

According to the traditional single-feature classification of Armenian dialects, the dialects of Nakhijevan belong to the “um” and “lis” branches of the Armenian dialects – with two-degree, three-degree and four-degree consonant systems, and according to the multi-characteristic statistical classification developed by Gevorg Jaukian, the Eastern (Meghri-Agulis), southeastern (Khoy-Maragha), northeastern (Ararat) and extremely northeastern (Artsakh-Shamakhi) dialect groups of the eastern grouping of Armenian dialects.

In this dialect variety, the Agulis (Zok) dialect, which attracts the attention of numerous researchers, is distinguished by its features, the seemingly extreme incomprehensibility of which at first glance is a consequence of almost unrecognizable changes in vowels, the presence of diphthongs against simple vowels, peculiarities of verb conjugation, etc. The Agulis dialect finally faded away in 1989 when the last speakers of the dialect were expelled from their cradle – the village of Tsghna in the historical province of Goghtn.

The last unexplored dialectal unit of the territory of Nakhijevan is a group of dialects of the northern villages of the historical province of Goghtn – Bist, Mesropavan, Vohoghi, Ramis, Paraka, representing a rather close linguistic relationship.

In our research, we applied to these five dialects the principle of multi-characteristic statistical classification developed by Gevorg Jahukyan and found out that the phonetic and morphological features of the dialects mentioned show quite close proximity. The low level of differences between the signs (only 5,5–9,5 units) indicates that these five dialects of North Goghtn can be considered as dialects of the same dialect or interdialect, which fully corresponds to the interval of 0,5–22 unit differences specified by G. Jahukyan.

North Goghtn have the closest relationship both with the Artsakh-Syunik dialect (the difference is 21,5 units, which is almost the border of the dialect transition to the dialect), and with the Meghri dialect (the difference is 23 units) and Agulis (the difference is 25 units), therefore, they present the interdialect of North Goghtn.

Artak Vardanyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department of Dialectology of the Institute of Language named after H. Acharyan of the NAS RA. Scientific interests: research of dialects of the territories of Nakhijevan and Vayots Dzor. Author of 1 monograph and more than two dozen scientific articles. artva@list.ru